

Խ. Ս. Հ. Մ. Ֆինանսական

ՊԵՏԱԿԱՆ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ

Կ Ա Ն Ո Ն Ն Ե Ր

ԱՇԽԱՏԱՎՈՐՆԵՐԻ ԿՑԱՆՔԻ ԿԱՄԱՎՈՐ
ԿՈՒՆԵԿՏԻՎ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ

368

Խ-11

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ ՀԵՍՀ ՊԵՏԱԳԻ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ

Յ Ե Ր Ե Վ Ա Ն

1937 թ.

Հ. Խ. Ս. Հ. ՖԻԼԵՐՈՎՈՍՍԱՏ

ՊԵՏՆԿԱՆ ԸՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ՎՆԵՐՈՒԹՅՈՒՆ

368

v6

Կ Ա Ն Ո Ն Ն Ե Ր

ԱՇԽԱՏԱՎՈՐՆԵՐԻ ԿՅԱՆՔԻ ԿԱՄԱՎՈՐ ԿՈԼԼԵԿՏԻՎ
ԱՊԱՅՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ

§ 1. Կյանքի կոլլեկտիվ ապահովագրությամբ, զամալոր կարգով, ապահովագրվում են առանց հատկի սահմանափակման՝ բանվորները, կոլտնտեսականները, կոոպերացված տնայնագործներն ու արհեստավորները, ֆրոնտների, բանֆուկների, տեխնիկոմների և բարձրագույն դպրոցների սովորողները, միջին, ավագ և բարձրագույն կադմի, ինչպես նաև գերակետիկ ծառայության կրտսեր հրամկազմի զինվորականներն ու այլ անձինք, վորոնք վարձով աշխատում են ԲԳԿԻ-ի, կարմիր նավատորմի և ՆԳԺԿ-ի մասերում և հիմնարկներում:

Կյանքի կոլլեկտիվ ապահովագրությամբ ապահովագրվում են միմիայն աշխատունակ քաղաքացիները, վորոնք աշխատում են ապահովագրվող կոլլեկտիվում (ֆաբրիկաներում, գործարաններում, խորհրտնտեսություններում, կոլտնտեսություններում, հիմնարկներում կամ հասարակական կազմակերպություններում): Կոլլեկտիվ ապահովագրությամբ չեն կարող

Պատ. խմբագիր Հ. ՍԱՐԳՍՅԱՆ
Թարգմանեց Մ. ՍԱՐԳՍՅԱՆ

201
37

Կիրովականի տպարան

ապահովագրվել այն անձինք, վորոնք չեն աշխատում ապահովագրվող կողմի կողմում, ինչպես նաև չաշխատող հաշմանդամները, թողակառուցները և այլն:

Կոլտնտեսություններում կյանքի կոլլեկտիվ ապահովագրություն ընդունվում են այն բոլոր կոլտնտեսականները, վորոնք մասնակցում են կոլտնտեսությունների աշխատանքին և ունեն աշխուրեք գյուղատնտեսական արտելի կանոնադրության համաձայն:

Աշխատունակ կոլտնտեսականները և այն անձինք, վորոնք աշխուրեք չունեն կամ ապահովագրության պահին հիվանդության կամ հաշմանդամության պատճառով կոլտնտեսության աշխատանքին չեն մասնակցում, ինչպես նաև այն կոլտնտեսականները, վորոնք իրենց բարեկամների խնամքի տակ են գտնվում կամ կոլտնտեսության վարչությունից նպաստ են ստանում՝ հիվանդ կամ հաշմանդամ լինելու պատճառով, չեն կարող ապահովագրվել:

§ 2. Ապահովագրությունը կնքվում է այն դեպքում միայն, յերբ տվյալ ձեռնարկության, ցեխի, կոլտնտեսության, խորհրդակցության, հիմնարկի մեջ և այլն զբաղված աշխատավորների առկա կազմի վոչ պակաս քան 50% (կեսը) ապահովագրվելու գրավոր ցանկություն է հայտնում և վճարում է առաջին մուծումը (§ 10): Յեթե ապահովագրական տարվա ընթացքում ապահովագրվածների թիվը պակասում է, ապա այդ չի խախտում պայմանագիրը: Չի թույլատրվում նույն անձի ապահովագրությունը յերկու և ավելի կոլլեկտիվ ապահովագրության պայմանագրերով:

Այն անձինք, վորոնք հիվանդության պատճառով

գտնվում են արձակուրդում՝ ապահովագրության մեջ չեն ընդունվում:

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ.— Այն կոլլեկտիվներում, վորտեղ 10-ից ավելի քիչ աշխատողներ կան, պահանջվում է, վոր կոլլեկտիվի բոլոր աշխատողներն անպայման մասնակցեն ապահովագրությանը, իսկ այն կոլլեկտիվները, վորոնք ունեն 10-ից մինչև 20 հոգի՝ պահանջվում է, վոր ապահովագրությանը մասնակցեն վոչ պակաս քան 10 հոգի:

§ 3. Կոլլեկտիվ ապահովագրությունը կնքվում է ստանց բժշկի զննության:

§ 4. Այն աշխատողները, վորոնք ապահովագրություն կնքելու պահին գուրս են մնացել, կարող են լրացուցիչ կերպով մտնել ապահովագրվածների շարքերն իրենց գրավոր հայտարարությամբ:

§ 5. Ապահովագրությունը կնքվում է ապահովագրվողների գրավոր դիմումի հիման վրա: Այս դիմումի մեջ ապահովագրվողը ցույց է տալիս, թե ում է նա նշանակում ապահովագրական գումարն ստանալու համար իր մահվան դեպքում:

Ապահովագրական գումարն ստանալու համար ապահովագրվածը կարող է նշանակել ֆիզիկական կամ իրավական անձի:

Ապահովագրվածը կարող է ապահովագրության ժամկետի ընթացքում փոխարինել ապահովագրական գումար ստանալու համար իր նշանակած անձին մի այլ անձով, վորի համար պետք է գրավոր դիմի այն ապահովագրական տեսչությանը, վորը կնքել է տվյալ կոլլեկտիվի ապահովագրությունը:

§ 6. Յուրաքանչյուր ապահովագրվածին տրվում

և Պետապի ապահովագրական վկայական (սվիդիտել-ստելո):

§ 7. Պետապը կոլլեկտիվ ապահովագրությունն ընդունում է 500-ից մինչև 5000 ու. գումարով յուրաքանչյուր անձին:

Ձեռնարկության, հիմնարկի, կոլտնտեսության, ցեխի աշխատավորների առանձին կոլլեկտիվում կամ աշխատավորների խմբում սահմանվում է միասնական պահովագրական գումար յուրաքանչյուր ապահովագրվածի համար:

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ.—Աշխատավորների ցանկությամբ թույլատրվում է տվյալ ձեռնարկության կամ ցեխի բանվորներին և ծառայողներին ապահովագրվել ըստ խմբերի, աշխատավարձի չափի համեմատ: Որինակ՝ 1-ին խումբը կազմվում է ամսական մինչև 150 ուրլի աշխատավարձ ստացողներից, յերկրորդ խումբը՝ 150 ու. մինչև 300 ու., յերրորդ խումբը՝ 300 ու. ավելի բարձր և այլն:

Յուրաքանչյուր խումբ կարող է ապահովագրվել ցանկացած միասնական գումարով՝ 500-ից մինչև 5000 ուրլու սահմաններում:

Այդ ապահովագրությունը թույլատրվում է այն դեպքում միայն, յեթե խմբում ապահովագրվում են 10-ից վոչ պակաս հոգի և միանման աշխատավարձ ստացողների առկա կազմի 50% -ը:

§ 8. Կյանքի կոլլեկտիվ ապահովագրության կարգով Պետապն ապահովագրական գումար վճարում է ապահովագրվածի վորեւ պատճառով մահանալու դեպքում, ինչպես նաև այն դեպքերում, յերբ ապահովագրվածը մշտապես, լրիվ կամ մասնակի կերպով կորցնում է իր աշխատունակությունը դժբախտ պատահարի հետևանքով:

Դժբախտ պատահարի պատճառով առաջացած հաշմանդամության դեպքում Պետապը պատասխանատվություն է կրում միմիայն այն ժամանակ, յերբ ապահովագրվածը մշտապես կորցնում է իր ընդհանուր աշխատունակությունը, վոր նա ունեցել է դժբախտ պատահարի պահին: Պրոֆեսիոնալ աշխատունակությունը կորցնելու համար Պետապը պատասխանատու է:

§ 9. Պետապն ապահովագրական գումար չի վճարում՝

1) յերբ մահն առաջ է գալիս այն անձի դիտավորությամբ կամ կոպիտ անդգուշությամբ, վորը նշանակված է ապահովագրական գումար ստանալու համար.

2) յեթե ապահովագրվածի մշտական (լրիվ կամ մասնակի) հաշմանդամությունը առաջանում է՝

ա) զանազան հիվանդություններից և նրանց հետևանքներից, թեկուզ այդ առաջացած լինի ապահովագրվածի իր պաշտոնական պարտականությունները կատարելիս և

բ) ապահովագրվածի կողմից հանցագործություն կատարելիս կամ հանցագործության փորձ անելիս.

3) յերբ դատարանի վորոշմամբ բռնագրավվում է ապահովագրվածի գույքը կամ յերբ ապահովագրվածի մահից հետո դատարանի վորոշմամբ գույքը բռնագրավվում է այն անձի մոտ, վորը նշանակված է ապահովագրական գումար ստանալու համար:

§ 10. Պետապի պատասխանատվությունն ըսկավում է այն որվա ժամը 24-ից, յերբ Պետապի ընթացիկ հաշվին կամ զրամարկիդ մուծվում է ապահովա-

գրական վճարումը վոչ պակաս քան ապահովագրվող ցեխի, բաժնի, վարչության, ագրոկայանի, կոլտնտեսային և արտադրական բրիգադի անձանց առկա կազմի 50 տոկոսի համար:

Պետապի պատասխանատվությունը լրացուցիչ կերպով կոլլեկտիվ ապահովագրություն մեջ մտնողներին համար սկսվում է, յերբ մուծվում է ապահովագրական վճարում ընթացիկ կամ հաջորդ ամսվա այն թվից հետո, վորից սկսվել է Պետապի պատասխանատվությունը կոլլեկտիվ պայմանագրով: (Որինչ, Պետապի պատասխանատվությունը կոլլեկտիվ պայմանագրով սկսվում է նոյեմբերի 5-ին, լրացուցիչ կերպով ապահովագրվածը մուծանք է կատարել նոյեմբերի 8-ին, պատասխանատվությունը նրա համար սկսվում է դեկտեմբերի 5-ից: Մուծանքը դեկտեմբերի 2-ին կատարելու դեպքում պատասխանատվությունը սկսվում է նոյնպես դեկտեմբերի 5-ից):

§ 11. Ապահովագրական մուծանք կատարվում է տարեկան 12 ուրբու չափով ապահովագրական գումարի յուրաքանչյուր հազար ուրբուց:

§ 12. Ապահովագրական վճարումներ յուրաքանչյուր ապահովագրված կատարում է մեկ տարվա, կիսամյակի, քառամյակի համար սկզբից, տվյալ ձևաչափով մեջ սահմանված կարգով:

Յեթե ապահովագրվածը ժամանակին չի մուծում հերթական վճարումը, ապա Պետապի պատասխանատվությունը վերջանում է այն որվա ժամը 24-ից սկսած, առ վորն ապահովագրական վճարումներ են կատարված: Յեթե ապահովագրական վճարումներ ապահովագրվածներն իրենք, կամ նրանց հանձնարա-

րությունը վորեւ մեկը, կատարում է վոչ այս կանոնների համաձայն, ապա Պետապը վոչ մի պատասխանատվություն չի կրում և այդ վճարումները յինթակա յեն վերադարձան:

§ 13. Այն ապահովագրվածները, վորոնք արձակուրդի մեջ են գտնվում հիվանդության պատճառով և չեն կատարում իրենց հերթական վճարումները՝ ապահովագրված են համարվում արձակուրդի ամբողջ ընթացքում, բայց վոչ ավելի ուշ, քան հիվանդանալուց չորս ամսվա ընթացքում: Արձակուրդից վերադառնալուց հետո բոլոր ժամկետանց վճարումները պետք է մարվեն: Ապահովագրվածի մահանալու կամ հաշմանդամության դեպքում ժամկետանց մուծանքները պահվում են ապահովագրական վարձատրությունից:

§ 14. Այն ապահովագրվածները, վորոնք իրենց հիվանդության ժամանակ հաշմանդամության են փոխադրված, հաշմանդամության փոխադրվելու պահից, մեկ ամսվա ընթացքում, պետք է մարեն բոլոր ժամկետանց վճարումները և հետագայում ժամանակին վճարեն հերթական մուծանքները:

Ժամկետանց մուծանքները սահմանված ժամկետին չմարելու դեպքում ապահովագրությունը վերջանում է և ապահովագրվածը կորցնում է ապահովագրական վարձատրություն ստանալու իրավունքը:

§ 15. Կոլլեկտիվ ապահովագրությունը Պետապն ընդունում է մեկ տարի ժամանակով:

Տարվա ժամկետը լրանալուց հետո ապահովագրվածները կարող են վերաինքել իրենց ապահովագրությունը հաջորդ տարվա համար, յեթե ապահովա-

դրութեան տարեկան ժամկետի վերջում կողքիկտի-
վում ապահովագրվածներ մնացել են մոշ պակաս այն
քանակից, մորը պահանջվում է կողքիկտիվ ապահո-
վագրութեանը կնքելու համար (§ 5-2 և 7):

§ 16. Այն ապահովագրվածները, մորոնք հաշ-
մանդամութեան են անցել կամ այլ պատճառներով
թողել են աշխատանքը ձեռնարկութեան մեջ կամ
հիմնարկում, յետե կամենում են, կարող են շարու-
նակել իրենց ապահովագրութեանը նույն ձեռնարկու-
թեան մեջ կամ հիմնարկում, մորտեղ նրանք ապահո-
վագրված են յեղել և ելի այնքան տարի, քանի տա-
րի նրանք անընդհատ ապահովագրվել են մինչև աշ-
խատանքից հեռանալը կամ հաշմանդամ դառնալը,
բայց յերկու տարուց մոշ ավել:

§ 17. Ապահովագրվածի մահվան դեպքում ա-
պահովագրական գումարը տրվում է այն անձին, մո-
րը նշված է ապահովագրվածի դիմումի մեջ:

Յետե նման անձ չի նշված, ապա ապահովա-
գրական գումարը վճարվում է՝

ա) ապահովագրվածի կնոջը (կամ ամուսնուն) և
յերեխաներին կամ դրանց բացակայութեան դեպքում
թոռներին.

բ) «ա» կետում նշված անձանց բացակայու-
թեան դեպքում, ապահովագրական վարձատրութեան-
նը տրվում է ապահովագրվածի խնամքի տակ գտնվող
ծնողներին, կամ յեղբայրներին և քույրերին:

§ 18. Ապահովագրական գումար ստանալու հա-
մար պետք է Պետապին հետևյալ փաստաթղթերը
ներկայացնել՝

ա) տեղեկանք մահացածի պաշտոնավայրից նրա
ապահովագրութեան մասին.

բ) ապահովագրվածի վկայականը, մորը հա-
տատում է ապահովագրական վճարումներ կատարե-
լու հանգամանքը.

գ) ապահովագրական վարձատրութեան ստացո-
ղի անձնագիրը.

դ) ԶԱԳՍ-ի վկայականն ամահովագրվածի մահ-
վան մասին.

ե) տեղեկանք այն բժշկից, մորը բուժել է ա-
պահովագրվածին նրա վերջին հիվանդութեան ժա-
մանակ, յեղրակացութեամբ մահվան կամ հաշմանդա-
մութեան պատճառի մասին, յետե ԶԱԳՍ-ի վկայա-
կանում չի նշված մահվան պատճառը:

ԾԱՆՈԹ ՈՒԹՅՈՒՆ.—Վերևում հիշված բո-
լոր փաստաթղթերն ապահովագրական գումար
ստացողներին ստորագրութեան հետ միասին
մնում է Պետապին գործերում, իսկ անձնագիրը
հետ է վերադարձվում տիրոջը:

Յետե ապահովագրվածի մահը բունի և լինում,
ապա անհրաժեշտ է ներկայացնել քննչական որդա-
նից տեղեկանք այն մասին, մոր ապահովագրական
գումար ստացողն ապահովագրվածի մահվան կա-
պակցութեամբ պատասխանատվութեան չի յենթարկ-
վում:

Այն դեպքերում, յերը ապահովագրական գու-
մար ստանալու համար նշանակված անձը քրեական
պատասխանատվութեան է յենթարկվում ապահովա-

գրվածի մասվան գործի կապակցութեամբ, անհրա-
ժեշտ և ներկայացնել զատարանի ուժի մեջ մտած
դատավճռի կամ վորոշման վավերացված պատճենը
այն մասին, վոր քննութիւնն այդ անձի մասին
կարձակած է:

§ 19. Ապահովագրվածի հետ դժբախտ դեպք
պատահելիս, ապահովագրական գումար ստանալու
համար, նախորդ պարագրաֆի «ա» և «բ» կետերում
նշված փաստաթղթերից բացի պետք է Պետապին
ներկայացնել դժբախտ դեպքի վերաբերյալ կազմված
ակտի կամ արձանագրութեան պատճենը կամ նը-
բան փոխարինող փաստաթուղթը, վորն ապացուցում
է, թէ իրոք ապահովագրվածի հետ դժբախտ դեպք է
պատահել:

§ 20. Ապահովագրվածի հաշմանդամութեան աս-
տիճանը (վոր դժբախտ դեպքի հետեանքով է առաջ
յեկել) վորոշում է բուժումից հետո եքսպերտ բժիշկը
կամ բժշկական եքսպերտիզայի Բյուրոն, Պետապին
հրահանգի հիման վրա:

§ 21. Յեթե ապահովագրվածը մշտապես և լրիվ
կորցնում է իր աշխատունակութիւնը դժբախտ դեպ-
քի հետեանքով, ապա Պետապը լրիվ վճարում է ի-
րեն ապահովագրվածին լրիվ այն ապահովագրական
գումարը, վորը նշված է ապահովագրական վկայա-
կանում, իսկ մասնակի կերպով կորցնելու դեպքում՝
ապահովագրվածի կորցրած աշխատունակութեանը
համեմատ:

Յեթե ապահովագրվածի կենդանի յեղած ժամա-

նակ հաշմանդամութեան համար հասանելիք ապահո-
վագրական գումարը վճարված չի յեղել, ապա նրա մա-
նուց հետո այդ գումարը չի տրվում:

§ 22. Մահվան կամ հաշմանդամութեան համար
վճարվող ապահովագրական գումարից պետք է պա-
հել այն ապահովագրական վճարումները, վորոնք չեն
ստացվել մինչև ապահովագրական տարվա վերջը:

§ 23. Դժբախտ պատահարի հետեանքով լրիվ
կամ մասնակի կերպով հաշմանդամ դառնալու դեպ-
քում տուժող անձի ապահովագրութիւնը շարունակ-
վում է մինչև ապահովագրական տարվա վերջը և,
անկախ հաշմանդամութեան համար ապահովագրական
վարձատրութիւն վճարելուց, այդպիսին տրվում է
լրիվ չափով նաև ապահովագրվածի մահանալու դեպ-
քում, յեթե այն տեղի յե ունենում մինչև ապահովա-
գրական պայմանագրի ժամկետը լրանալը:

§ 24. Պահանջ ապահովագրական գումար վճա-
րելու մասին պետք է առաջադրել Պետապին այն որ-
գանին, վորը ապահովագրական վկայական է տվել և
վոչ ուշ, քան յերկու տարվա ընթացքում, ապահո-
վագրվածի մահվան որվանից կամ նրա հետ դժբախտ
դեպք պատահելու պահից հաշված: Այդ ժամկետից
հետո ներկայացված պահանջները չեն բավարարվում:

§ 25. Բողոքները շրջանային և քաղաքային ա-
պահովագրական տեսչութիւններին սխալ գործողու-
թիւններին և վճիռներին դեմ պետք է ներկայացնել
Պետապին՝ տեղական հանրապետական, յերկրային և
մարզային վարչութիւններին, իսկ դրանց վճիռնե-

4076
րին համաձայն չլինելու դեպքում՝ դաշնակից հան-
րապետությունների Պետապի վարչություններին:

Դաշնակից հանրապետությունների Պետապի
վարչությունների վճիռները կարելի չէ բողոքարկել
ԽՍՀՄ Պետապի Գլխավոր վարչությանը, Մոսկվա-
յում:

ԽՍՀՄ Ֆինանսների

Ժողովրդական Կոմիսար՝ Գ. ԳՐԻՆԿՈ

ԽՍՀՄ Պեսապի Գլխավոր

վարչության Պես՝ Ս. ԱՐԱՆՈՎ

9 ապրիլի, 1937 թ., № 114



<< Ազգային գրադարան



NL0215955

419

43. 770

П Р А В И Л А

**добровольного коллективного страхования
жизни трудящихся**